<<ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԵՎ <<ՍԵՎԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՇԵՆՔ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. <<Գավառի բժշկական կենտրոն>> և <<Սևանի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունները նոր շենք տեղափոխվելու պատճառով, հիմնական միջոցների և այլ ապրանքանյութական արժեքների գույքագրում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /նախագահ/

Դավթյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ

Ղալակչյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Այվազյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել համապատասխան ընկերության տնօրենին, գլխավոր հաշվապահին, գլխավոր ֆինանսիստին, վերստուգողին և նյութական պատասխանատու անձերին:

1. Հանձնաժողովին՝ գույքագրման արդյունքները 10- օրյա ժամկետում ներկայացնել մարզպետարան:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ